ABA-ի հարցում-հայտարարությունը

08.02.2012 07:17

Հարգելի փաստաբան,

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Իրավունքի գերակայության նախաձեռնությունը (ABA /ROLI) կազմակերպում է իր կողմից իրականացված փաստաբանական հմտություններ դասընթացի մասնակիցների ակտիվ համացանցային խումբ, որին անդամագրվածները հնարավորություն կունենան պարբերաբար տեղեկատվություն ստանալու մեր կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների և ծրագրերի մասին, փոխանակելու տեղեկատվություն և ներկայացնելու առաջարկություններ:

Նախկինում կազմակերպված փաստաբանական հմտություններ դասընթացի որակի և արդյունավետության ուսումնասիրման նպատակով խնդրում ենք լրացնել հարցաթերթիկը և ուղարկել assistant@abaceeli.am հասցեով մինչև 2012թ. փետրվարի 20-ը:

Հարցաթերթիկ

1. Երբ եք մասնակցել փաստաբանական հմտություններ դասընթացին:

2. Ինչով եք ներկայումս զբաղված, Ձեր մասնագիտացումը, հատուկ ծրագրեր:

3. Ինչով է նպաստել դասընթացը Ձեր որպես իրավաբանի կայացմանը:

4. Ինչպիսի նոր հմտություններ եք ձեռք բերել դասընթացի շնորհիվ:

5. Դասընթացը նպաստել է, որպեսզի օգտակար ծանոթություններ ձեռք բերեք:

6. Հետաքրքրված եք համագործակցելու ABA /ROLI-ի հետ հետագա ծրագրերի շրջանակներում, եթե այո, ապա ինչպիսի ծրագրեր կառաջարկեիք:

7. Համաձայն եք, որպեսզի Ձեր էլեկտրոնային հասցեն ընդգրկվի համացանցային խմբում, եթե այո, ապա նշեք Ձեր հասցեն:

Շնորհակալություն համագործակցության համար

Հարգանքներով՝

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Իրավունքի գերակայության նախաձեռնություն (ABA /ROLI), քրեական իրավունքի ծրագիր

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })